



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



8.8
85

XIX M.


1882

XIX
5 5 FEB 5013

610
11-11

LIBRARY OF THE
MUSEUM OF NATURAL HISTORY

11-11



RECEIVED
FEB 11 1882

1882

22 FEB 2013

0 7
7 11

613.8 57
485

2831

20 JUL 2010

4-85 uy

Հանրամասչելի Գրադարան

№ 2

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

№ 2

610
7-ԱՌ

ԱՐԲԵՑՈՂՈՒԹԵԱՆ

Դ Է Մ

1002
9937



Հրատարակվում է պ.պ. եզր Զոհրաբեան եւ Միլաս Սուր-
խանեան ընկ. ծախքով:

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ՀԵՐՄԷՍ», Միլասիկեան փող., 81.
1904.

1888

Дозволено ценз. 30 Декабря 1904 г. Тифлисъ.

Ա. Զ. Դ.

Արբեցողութիւնը ոչ միայն անձնական ախտ է, այլ և հասարակական չարիք, որի դէմ մեր բոլոր ոյժերով պէտք է մաքառենք: Մանաւանդ անագին է այդ ախտաւոր սովորութեան առողջապահական և հասարակական նշանակութիւնը ուսանող երիտասարդութեան վերաբերմամբ: Ուստի որքան շատ խօսուի, որքան շատ գրուի արբեցողութեան դէմ, որքան շատ տարածուեն ժողովրդի մէջ հեղինակաւոր անձանց կարծիքները արբեցողութեան քնասակարութեան մասին, այնքան և շատ նպաստած կը լինենք մի չարիքի վերացման, որի աղետալի հետեանքները անհամար են:


Այդ նպատակով մենք հրատարակում ենք ներկայ երեք գրուածքը արբեցողութեան դէմ:

ա. Յիւրիխի համալսարանի պրօֆեսոր դոֆտօր Աւգուստ Ֆօրկլի ճանը, որ նա արտասանել է 1900 թ. Սեպտեմբերի 7 և 13-ին Գրիտտիանիա և Ուպսալ քաղաքներում Ուսանողական ժուժկալական ընկերութեան մէջ:

բ. Յիւրիխի շվեյցարական ժուժկալութեան ընկերութեան կողմ:

գ. «Ժամանակ է սթափուել» յօդուածը:

Թարգմանութիւնը որ արված է սուսայ «Посредникъ» հրատարակչական ընկ. հրատարակութիւնից, մեր հսկողութեամբ և ցուցմունքով կատարել է պ. Յ. Եսայեան:



Յ Ա Ր Գ Ն Լ Ի Պ Ա Ր Ո Ն Ն Ե Ր

Ինձ համար պատիւ և ուրախութիւն եմ համարում Քրիստիանո – Ուսասլի դասնողական ժողովարական ընկերութեան ներկայացուցիչների հրաւերն ընդունել և արտայայտել ձեր առաջ, համառօտ խօսքերով, իմ հայեացքը պիտիօրի և նրա սօցիալական նշակութեան մասին, գլխաւորապէս ուսանող երիտասարդութեան վերաբերմամբ, որ ձեր ժողովրդի յոյսն և ապագան է կազմում:

Ոգելից խմիչքներ գործածելու և նրանցով արբելու սովորութիւնը մարդկանց մէջ ամենահին սովորութիւններից մէկն է, այսպէս կոչուած, կուլտուրական-պատամական մի փաստ է դա:

Բայց հնութիւնը կարող չէ արդարաւնել այդ սովորութիւնը, ինչպէս որ չէ կարող արդարացնել մարմնական տանջանքը, մար-

գակերութիւնը, ստրկութիւնը և այլն: Բացի
զբանից, հնուամբ արբեցնող խմիչքները շատ
թանգ էին, ուստի և նրանց գործ էին ա-
ծում միայն տօնախմբութիւնների ժամանակ
և այն էլ միջոցի աէր մարդիկ: Այն ժամա-
նակ զեռ չէին կարողանում պահել նրանց
մեծ քանակութեամբ և, բացի զբանից, փոխադ-
րութեան յարմարութիւնների բացակայու-
թիւնը արգելք էր լինում խմիչքների տա-
րածման: Գլխաւորն այն է, որ զեռ յայտնի
չէր գինեգործութեան և վարեջուր եփելու
արհեստը: Ինչպէս յայտնի է, հէնց ոգելից
ըմպելիներ պատրաստելու արհեստը մեծ
ծաւալով մեծացրեց նրանց գործածութիւնը,
և առաջացրեց այն քրոնիկական ու հեագհե-
ատէ աճող թունաւորումն և այլասեռումը,
որից տանջւում է այժմ ամբողջ մարդկու-
թիւնը: Առաջ գինին պատրաստում էին
սիայն խաղողից, իսկ այժմ ընդարձակ դաշ-
տեր, որոնք կարող էին կերակրել ահագին
ժողովուրդ, ցանուած են գետնախնձորով և
հաճարով, օղի և վարեջուր պատրաստելու
համար: Առաջ ժողովուրդը խմում էր ջուր:
Այժմ ալիօօլի գործածութեան սովորութիւնը՝
ամեն անգամ ուտելուց առաջ և ուտելու ժա-

մանակ, այն աստիճան թափանցել է ժողովրդի
մէջ, որ համոզմունք է կազմուել նրա առողջա-
ւարութեան և աննգարարութեան մասին:
Իրանց զաւակներին ստինքներով կերակրող
մայրերը, ենթադրելով, թէ նա (ալիօօլը)
ոյժ է տալիս իրանց և երեխաներին, խմում
են և խմացնում երեխաներին. իսկ մարդիկ,
որոնք կարողանում են խմել մեծ քանակու-
թեամբ ալիօօլ, պարծենում են դրանով:

Պանդոկները ու գինեաներն աճում են
ինչպէս սունկեր, և նրանց մէջ վատնում
են իրանց աշխատանքը հայրերը և նոյն իսկ
մայրերը և որդիները: Ընտանեկան կեանքը
քայքայւում է պանդոկներում ժամանակ անց-
կացնելուց. բացի զբանից, աշխատում են ու-
նենալ ալիօօլի պաշար տան մէջ իբր գինի
և օղի: Մենք այս ուղղութեամբ այնքան
առաջ ենք գնացել (օրինակ, համարեա ասեն
տեղ Միջին-Ներօպայում), որ ժողովուրդը
այժմ համարում է ալիօօլն իբրև անհրա-
ժեշտ, եթէ ոչ ամենաանհրաժեշտ մասը
մարդու անդի: Բրէմէնում բնագէտների
ճաշի ժամանակ համարեա անհնար եղաւ
ջուր ձեռք բերել: Սեդանների վրա, 800
պիտիւների առաջ ոչ սի շիշ ջուր չէր դրուած,

այնպէս որ ես ուրախացայ, երբ ծառան մի ժամից յետոյ ինձ համար ջուր բերեց գլխու լուացուած շոով:

Չեմ կարող ինձ գտակել և չը պատմել ձեզ, այսպէս ասած, մի «գուարճալի պատմութիւն», թէև իմ դասակիցների կողմից դաւաճանութեան մէջ մեղադրուելու վտանգին եմ ենթարկուում: Եթէ իմ պատմութեան մէջ որ և է անձիշտ խօսք կայ, թող ինձ ապացուցեն այդ, և ես ուրախութեամբ յետ կը վերցնեմ խօսքս:

Բանը նրանումն է, որ մի ամիս առաջ Բերլինում, ինչպէս յա՛մնի է, կայացաւ բժիշկների միջազգային կօնգրէս: Միայն մի իննձոյքի ժամանակ, որ Բերլին քաղաքը սարքեց բժիշկների համար, խմեցին.

5308	212	շամպայն
4721	»	բօրդօ
3805	»	ըէնվէյն
1500	»	մօզէլվէյն

Բոլորը 15334 212 գուտ գինի, չը հաշուելով 179 վէրբօ բաւարեան գարեջուր և 300 բաժին կօնեակ:

Խնձոքին մասնակցում էին 4000 մարդ: Ուրեմն իւրաքանչիւր մարդուն ընկնում է

4 շիշ գլինի, մօտ 2 գաւաթ գարեջուր և ^{3/40} բաժին կօնեակ, և եթէ մենք ենթադրենք, որ սպասաւորները, իբանց սովորութեան համաձայն, օգնել են կիսով չափ, այն ժամանակ բանը կը փոխուի: Չար լեզուները պատմում են շատ գուարճալի պատմութիւններ, որոնք առաջ են եկել իբր հեռեւանք alcoholismus acutus-ի և դահլիճում, և սանդուղների վրա և առաւելապէս փողոցներում: Բայց ընկերաբար՝ ես չեմ շօշափի այդ պատմութիւնները: «Ալկօհօլի չափաւոր դորձածութեան» այս օրինակը պարզապէս ցոյց է տալիս, թէ պանդոկային կեանքը ինչպիսի պտուղներ է տալիս ապագայում համալսարանական երիտասարդութեան:

«Դուք յուեատես էք», կասեն ինձ: «Գիւնին ուրախացնում է մարդուն նրա կեանքի տխուր բողբոջներին. գրգռող խմիչքները բարձրացնում են հոգին, ծառայում են իբրև մերձեցման միջոց:

«Որքան ձանձրալի կը լինեն մեր խրնձոքները ու տօնախմբութիւններն առանց ալկօհօլի: Վնասում են միայն չափազանցութիւնը և ալկօհօլի հետ խառնուրդները: Չա-

փաւոր գործածութիւնը ոչ մի վնաս չէ հասցնում: Մինչև անգամ նա օգտակար է դառնում—աւելացնում է ոյժերը, ոգևորում է, տաքացնում, թարմացնում, օգնում է գործին. արևօճիլը—անսեսական հրաշալի միջոց է, իսկ գարեջուրը, բացի դրանից, և սննդալար է»:

Ինչքան որ այստեղ խօսք կայ, այնքան և սուտ, խաբեբայութիւն, ինքնախաբէութիւն և թիւրիմացութիւն:

Բոլոր ոգելից ըմպելիները, մինչև անգամ սաստիկ ջրախառն, ինչպէս գարեջուրը և պտուղներից քամած գինիները, նոյնպիսի թոյննը են, ինչպէս օպիումը, մօրֆին, կօկաինը և ուրիշները: Որովհետև նրանց հետ ջուր շատ է խառնած, ուստի նրանց կարելի է ընդունել մեծ քանակութեամբ,—անա միակ տարբերութիւնը:

Ես կը փորձեմ արևօճիլի գործածութեան վերաբերեալ հարցերն իսկութեամբ առաջ բերել և պատասխանել նրանց ոչ թէ ենթադրապէս, այլ հաստատելով իմ պատասխանները գիտողութիւններից գուրս բերուած սպացոյցներով:

I. Օգտակար և և արդեօք ոգելից խմիչքները մարդու առողջութեան համար իբր միջոցներ զուարճութեան, կազդարման եւ կաւնոյն իսկ սննդի:

Այս հարցին ես պատասխանում եմ վճռողապէս՝ ոչ. եթէ չը համարել ամեն համեղ բան օգտակար: (Եւ համեղ կարելի է կոչել սխալն մի քանի թոյլ ոգելից լամիչք): Եւ անա թէ ինչու ես այդպէս եմ մտածում.—

ա) Մարդիկ, որոնք բոլորովին խուսափում են ամեն տեսակ ոգելից լամիչքից, իրանց շատ լաւ են զգում ամեն պարագանների մէջ, որ և նրանք միաձայն հաստատում են. ամեն մի ծանր աշխատանք նրանք կարողանում են կատարել նոյնպէս լաւ, եթէ ոչ աւելի լաւ, երբ նրանք լամում են չափաւոր կերպով գարեջուր և գինի:

բ) Հաստատուել է (բժ. Պարկէս), որ աշխատութեան մրցման ժամանակ զինուորների մէջ, որոնցից մի քանիսը ստանում էին քիչ ոգելից լամիչք, իսկ միւսներին ոչինչ չէին տալիս, յաղթութիւնը մնում էր արևօճիլ չը գործածողների կողմը:

դ) Մինչև անդամ գինու չափաւոր գործածութիւնը ազդում է մտքի վրա, առաւելապէս երեխաների մտքի վրա, թմրեցուցիչ և գրգռիչ կերպով: 1889 թ. Բերնում, Իեննէրի մանկական հիւանդանոցի հաշուետւութեան մէջ (Բերն, 1890) պրօֆ. Դեմմէն, ինքը չը լինելով հանդերձ ժուժկալութեան կուսակից, հաղորդում է մի հետաքրքիր փորձ, որ նա կատարել է ժուժկալութեան նոյնպէս ոչ—կողմնակից ուսուցիչներին միջոցով:

Կային մի քանի առողջ աշակերտներ, 10—15 տարեկան հասակի, որոնց, մի քանի ամսուայ ընթացքում (տարուայ թէ տաք և թէ ցուրտ ժամանակին) սկզբում չէին տալիս ոչ մի ոգելից խմիչք, իսկ յետոյ տալիս էին շատ չափաւոր կերպով գինի (ամեն օր ճաշից և ընթրիքից յետոյ—փոքրերին $\frac{1}{3}$ բաժակ թեթև գինի, ջրախառն, մեծերին— $\frac{1}{2}$): Մշտական հեռանալն այս էր—երբ արվում էր գինի, այդ երեխաները աւելի քնկոտ էին, աւելի պակաս ուշադիր, պակաս շարժուն և փոքր ինչ աւելի գիւրագրգիռ, քան թէ կատարեալ ժուժկալութեան շրջանում: Նրանցից մէկի դիւրագրը-

գրութիւնն այն աստիճան մեծացաւ, համեմատաբար ժուժկալութեան շրջանի հետ, որ ստիպուեցան նրան այլևս փորձերի չենթարկել:

դ) Ոգելից խմիչքներից բոլորովին ժուժկալ մարդիկ ապրում են երկար և իրանց կեանքի ընթացքում հիւանդանում են աւելի քիչ օրեր, քան չափաւոր խմողները: Այս բանը լաւ յայտնի է անգլիական՝ կեանքի ապահովագրութեան ընկերութիւններին, որոնք մեծ օգուտներ են ստանում ժուժկալներին ապահովագրելով, թէև վճարները մէջ գիջուկն են անում 10—20 0/0:

ե) Այն առարկութիւնը, թէ ոգելից ըմպելիքներն անհրաժեշտ են, որպէսզի մարդկանց մէջ մտերմութիւն առաջ գայ, իբրև սի բան, որ ոչ մի կերպ չէ հաստատուած, պէտք է համարել սուտ: Բոլորովին ժուժկալները ներկայանում են ամեն օր իբրև օրինակ այն բանի, որ նրանք էլ կարող են նոյնպէս լինել ուրախ, զուարթ և կենսունակ, ինչպէս և չափաւոր խմողները:

Ընդհակառակ, երբ մենք լուրջ քննադատութեան ենք երթարկում մտքի այն արտագրութիւնները, որոնք ծնւում են սո-

վորական արևօճօրական գրգռումից յետոյ, գուրս է գալիս, որ նրանց արժանաւորութիւնը շատ կասկածելի է. հեղինակները, սխափուելով, հրաժարուում են այդպիսի արտագրութիւնների շատերից: Ենթադրենք մինչև անգամ, որ բանաստեղծութեան մի քանի յայտնի գեղեցիկ արտագրութիւններ շարագրուել են արևօճօրի ազդեցութեամբ. բայց դա չէ ապացուցանում, որ եթէ նոյն գրողը լինէր աւելի զգաստ մարդ և կամ թէ բոլորովին ժուժկալ, այն ժամանակ նա չէր գրի աւելի շատ և աւելի լաւ, և ես անձամբ համոզուած եմ, որ նա կը գրէր և՛ շատ և՛ լաւ:

Բայց եթէ կան իսկ այդպիսի եղևեր, յամենայն դէպս նրանք չեն կարող վարձատրել մարդկութիւնը՝ արևօճօրից փշացած հանճարների եւ սարսնդների մեծ թուի փոխարէն:

Ես պնդում եմ, առանց ամենափոքրիկ տատանման, որ եթէ այսօր կախարդական գաւազանի մի շարժումով ամբողջ արևօճօրը ոչնչանայ Եւրոպայում և բոլոր գիներաները վերածուեն սրճարանների և թէյարանների,

հազորդակցութիւնը մարդկանց մէջ ոչ մի կերպ չի տուժի, — ընդհակառակն, նա աւելի բնական դիրք և հոգեկան վեհութիւն կստանայ:

դ) Այն առարկութիւնը, թէ ոգելից լամիչքները կազգուրում են, եռանդ տալիս, տաքացնում են, թարմացնում և այլն, հիմնրված է երկու գուտ սխբէկախիվ (ենթակայական) խաբբայութեան վրա. — հաճօրքի ենթակայական զգացմունքի և զգաստութեան կարողութեան թուլութեան վրա, որ առաջանում է արևօճօրի թոյնից: Արևօճօրը թուլացնում է պաղի, տաքի, յոգնածութեան, ցաւի զգայութիւնները, քանի դեռ տեղում է նրա թունաւոր գործողութիւնը, և մեզ օրօրում է մի անսակ հաճելի մշուշի մէջ: Հէնց սրանից են առաջանում այն հաճելի զգայութիւնները, որոնք մեր մէջ ոչնչացնում են վախի և երկիւղի զգացմունքները, իսկ հետևեալ օրը առաջ են բերում արբեցողութեան գլխացաւ: Թէ արևօճօրի թոյնից առաջացած ոյժի ենթակայական զգացողութիւնը գուրկ է բուրրովին օբէկախիվ հիմունքից, հեշտութեամբ

կարելի է ապացուցել ամեն մի արբեցող մարդու օրինակով:

է) Ծիծաղելի է ցոյց տալ, իբրև ապացույց ոգելից խմիչքների օգտակարութեան՝ գարեջրի այն չնչին սննդողականութիւնը, որ ոչ մի պարագայում համապատասխան չէ նրա գնի հետ, և գլխաւորաբար, միայն այն ժամանակ է նա նշանակութիւն ունենում, երբ սպառում է մեծ քանակութեամբ գարեջուր և երբ նա անպայման դառնում է վնասակար:

ը) Ալկոհօլի կարծեցեալ արժանաւորութիւնը, իբր այսպէս կոչուած «սնտեսական միջոցի», այսինքն այնպիսի նիւթի, որի օգնութեամբ կարելի է օրգանիզմը պահել քիչ կերակրով, — ալկոհօլի այդ յատկութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ վերջին ապաւէնը այն մարդոց, որոնց միակողմանի և անխառն դատողութիւնները չեն դիմանում խելացի հակաճառութեան: Տնտեսական միջոց, որ քայքայում է մարդկանց կեանքը: Այդ հիմունքով կարելի էր գործածել մկնդեղ, իբր սննդի նիւթ, չափութիւնը համարել մեծ բախտաւորութիւն և այլն:

թ) Ժուժկաներին առարկում են և այն,

որ մեր նոր քաղաքակրթութեան և մտաւոր մեծ աշխատանքի ժամանակ անհրաժեշտ են դրդուիչ միջոցներ:

Մասնացոյց են անում նաև վայրենիների վրա, որ նրանք էլ գործ են ածում իրանց տեսակի արբեցնող խմիչքներ: Աւելացնում են և այն, որ ալկոհօլից ժուժկալոգները դառնում են քնկոտներ կամ թէ փչացնում են իրանց՝ գործածելով մեծ քանակութեամբ թէյ և սուրճ...

Եւ շատ հեշտ է այդպիսի կեղծ պատճառաբանութիւններ անել ժուժկալութեան դէմ:

Առաջին, ճիշտ չէ, որ մարդ կարիք ունի գրգռող միջոցները՝ մտաւոր և ֆիզիկական աշխատութեան համար ոյժերը լարելու. ճիշտ չէ և այն, որ նա գործ է ածում այդ միջոցները ամենուրեք: Միլլիօնաւոր ժուժկաներ հակառակն են ապացուցաւորում, զոնէ կուլտուրական մարդկանց համար: Նոյնպէս և բնութեան շատ մօտ գրանւող բազմաթիւ ազգեր ապացուցանում են իրանց զգաստութեամբ, որ մինչև անգամ վայրենի կենդանիներն ամեն ժամանակ ևս

1566



լաւ է առանց գրգռիչ միջոցների օգնութեան ապրել:

Մանաւանդ սուտ է այն կարծիքը, որ իբր թէ ոգելից խմիչքների չը գործածութիւնը առաջ է բերում չափազանց գործածութիւն ուրիշ բաների մէջ:

Ընդհակառակը, կան այնպիսի գրգռիչ միջոցներ, որոնց գործածութիւնը պատճառ է դառնում ուրիշ միջոցների գործածութեան: Արկօհօլի գործածութիւնը ձեռք ձեռքի տուած առաջ է գնում ծխախոտի գործածութեան հետ: Փորձել են մօրֆինիստներին բժշկել, փոխարինելով մօրֆինը կօկաինով, կադէինով և կամ գինու մեծ քանակութեամբ: Այս անհեռատես բժշկութեան հետևանքը միշտ լինում էր այն, որ մօրֆինիստը դառնում էր կօկաինիստ, արկօհօլիկ և այլն, բացի այդ մնում էր և մօրֆինիստ: Աւելին կասեմ.— իմ ձեռքիս տակ կային շատ մօրֆինիստներ, և ես համոզուեցի, որ առողջանալուց յետոյ սովորաբար հիւանդութիւնը կրկնում էր արկօհօլի գործածութեամբ: Այդ պատճառով ես այժմ պահանջում եմ բոլոր մօրֆինիստներից լիակատար ժուժկալութիւն արկօհօլից, և այս պատուէրս

կատարողները շուտ են առողջանում: Բոլոր թոյների վերաբերմամբ պէտք է ժուժկալութիւն լինի: Մինչև անգամ սօցիալական մշտքով այնպիսի անվտանգ խմիչքների վերաբերմամբ, ինչպէս են թէյը, սուրճը, գազային ջրերը, ինչպէս և ծխախոտի վերաբերմամբ, անձնական առողջութեան օգտի համար պէտք է լինել չափաւոր: Մարդկանց, բոլոր կենդանիների և բոյսերի բնական խմիչքը եղել է և կը մնայ անապակ ջուրը: Այն երկիրներում, որտեղ ջուրը վատ է, միշտ կարելի է նրան, եփ սալով, առողջարար դարձնել: Արևադարձային երկիրներում, որտեղ ջուրը մեծ մասամբ վատ է լինում, ոգելից խմիչքները վերին աստիճան վտանգաւոր են և պէտք է խուսափել նրանցից: այդ բանը պնդում են լուրջ և կրթուած ուսումնասիրողները ու ճանապարհորդները: Բառ առ բառ նոյն են ասում նաև բևեռային երկիրները և բարձր, վտանգաւոր սարերը ուսումնասիրողները:

II. Վնասակար եւն արդեօք ոգելից խմիչք-
ները—ինչպէս գիւնիկ, գարեջուր, օղիկ,
երէ նրակն գործածուել յափառոր քաւնա-
կորեաւր:

Ես այս հարցին էլ վճռականապէս կը
պատասխանեմ՝ այո, ինչպէս նախընթա-
ցին՝ ոչ:

Ես համաձայն եմ, որ ամուր բնաւորու-
թեան տէր մարդիկ, չափաւորաբար գործա-
ծելով թեթեւ ոգելից խմիչքներ, չեն տու-
ժում, կամ գրեթէ չեն տուժում:

Բայց, պարոններ, լիակատար ժուժկա-
լութեան տեղ միայն չափաւորութիւն քա-
րոգոյնների խորին մոլորութիւնը նրանումն է
կայանում, որ նրանք երեւակայում են, թէ
իրբ ոգելից ըմպելիքի չափաւոր գործածու-
թիւնը կարող է յետ պահել մարդկութիւնը
ալիօհօլի չարաչար գործածութիւնից: Սա
մեծ մոլորութիւն է: Բոլոր փաստերը, բո-
լոր փորձերը, որ երկար տարիների ընթաց-
քում արուել են զանազան երկիրներում, ան-
հերքելի կերպով ասպացուցանում են այդ
հայեացքի կատարեալ անանկութիւնը և նրան

պաշտպանել կարող են միայն ընթացիկ կար-
ծիքների կոյր հետեողները և յուր սովորու-
թիւնների ստրուկները: Ուսուպխանները մենք
չենք, լիակատար ժուժկալութեան կողմնա-
կիցներս, այլ ընդհանուր չափաւորութիւն քա-
րոգոյնները: Մենք այլ ևս չենք խօսում ոգելից
խմիչքների անսկզբունք հետեողների մասին,
որոնք գործում են քաղաքական, ֆինանսական
և այլ նկատումներով, կամ թեթեւամտութեամբ:
Այդ մարդիկ զուտ հասարակական շահերի
ոխերիմ թշնամիներ են,— և նրանք կազմում
են մեծ թիւ: Մեր բարեկամներին, որոնք
իսկապէս մտածում են այնպէս, ինչպէս
մենք, բայց վախենում են իրանց մտածածն
արտայայտել, մենք կտեսնք ուղղակի.— ճշ-
մարտութիւնը երբէք շատ կանուխ չէ գալիս:

Ահա թէ ինչու ոգելից խմիչքների չափա-
ւոր գործածութիւնն ևս վնասում է սաստիկ. —

ա) Ալիօհօլը առաջ է բերում ծարաւ,
դառնում է՝ շնորհիւ սովորութեան՝ արհես-
տական կարիք և գրգռում է ցանկութիւն՝
հետզհետէ աւելի և աւելի խմել: Նա, ինչ-
պէս յուշկապարիկ, հմայում է թոյլ մարդ-
կանց հեշտասիրութեամբ, անդիմադրելի ոյ-
ժով հրում է նրանց դէպի առաջ ու առաջ

իր ցանցերի մէջ, և եթէ նրանց չէ սպա-
նում, այն ժամանակ կուլ է ապլիս նրանց
սերունդներին:

բ) Ինի գործածելու նովորոյթը և զի-
նեսները շարունակ աճեցնում են այն դրա-
մազլուխը որով պատրաստվում է ալկոհոլ. այդ
դրամազլուխը դառնում է մի ոյժ, որ կաշկան-
դամ է տէրութիւնը և նրան այնտեղ հասց-
նում, որ նա՝ տէրութիւնը՝ չը տեսնելով,
թէ ինչու մն է կայանում ժողովրդի բարե-
կեցութիւնը, դրամական օգուտ է քաղում
արբեցողութեան կրքից: Այն տէրութիւն-
ները, որոնք դեռ չեն արել այդ վտանգա-
ւոր փորձը, կարող են հեշտութեամբ խու-
սափել նրանից, բայց միանգամ ընկնելով
այդ եկամուտի ցանցի մէջ, արդէն դժուար
է դուրս գալ այնտեղից: Իրապէս հետազօ-
տենք աւելի մօտ այն, որ կոչւում է մենա-
վաճառութիւն:

Տէրութիւնը, որպէս զի սպառնովէ ժո-
ղովրդին մասնաւոր ձեռնարկողներին ազա-
նութիւնից, որպէսզի ապահովէ զուտ սպիր-
տի արտադրութիւնը, որպէսզի նուազեցնէ
ոգելից խմիչքների գործածութիւնը... և որ-
պէսզի եկամուտ ստանայ, փոխանակ արգե-

լելու սպիրտի վաճառումը, համաձայնու-
թիւն է կայացնում պատէնտ ստացողների,
օդե-գործարանատէրերի հետ: Կամ թէ, ինչ-
պէս Շվեդիայում և Նորվեգիայում, մենա-
վաճառութիւնը տրւում է յայտնի արտօ-
նեալ ընկերութիւններին, որոնք գտնւում են
տէրութեան և խիստ օրէնքների հսկողու-
թեան ներքոյ:

Այս բանի դէմ գլխաւոր առարկութիւնը
այն է, թէ ընդհանրապէս առողջարար սպիրտ
չէ լինում: Ապա, ինչպէս կարելի է մտա-
ծել ոգելից խմիչքների նուազեցման մասին
և միևնոյն ժամանակ աշխատել նրանց գոր-
ծածութիւնից օգուտ քաղել: Միլիէ, շվեյ-
ցարական ակցիդային վարչութեան տեսուչը,
փորձեց բացատրել այդ հակասութիւնը նրա-
նով, որ նա նկատում է մենավաճառութիւ-
նը՝ ինչպէս առևտրի առարկայ: Մենք սիրով
կը համաձայնուենք, որ սպիրտի գինը բարձ-
րացնելով՝ արքունի եկամուտը կը բարձրա-
նայ և միաժամանակ խմիչքի գործածութիւ-
նը ևս մասամբ կը պակասէ: Բայց պարզ է,
ինչպէս ցերեկ, որ այդպէս կը լինի միայն
առժամանակ, և որ խմիչքի գործածութեան
աստիճանաբար պակասելը կը պակսեցնէ և

արքունի եկամուտը: Երբ տէրութիւնը իր բիւզժէզի հիմք ընդունում է սպիրտի եկամուտը, նա պէտք է վախենայ գործածութեան մեծ նուազումից: Եւ իրօք այդպէս էլ է:

Նօրվէզիական հասարակական մենավաճառութեան սխտեմը, անկասկած, փայլուն հետևանքների հասաւ: Ինչո՞ւ: Հարցը պարզ է.— այն պատճառով միայն, որ նա հնարուած և գործադրուած է՝ ոգելից խմիչքների գործածութիւնը պակասեցնելու միակ և անկեղծ նպատակով: Ակցիօնէրների օգուտը 50/0-ից աւել չէ կարող բարձրանալ, իսկ տեղական համայնքները՝ թէ քաղաքներում և թէ գիւղերում ոչինչ չեն ստանում: Սյդպիսի մենավաճառութիւն, ինչպէս սկզբնական սիջոց, անտարակոյս, գովասանքի արժանի է:

Շվեդիայում, ընդհակառակը, տեղական համայնքները մաս ունեն օգուտից և դա շատ վատ է:

Ապա Նօրվէզիայում համայնքները իրաւունք ունեն արգելել ոգելից խմիչքի վաճառումը: Շվեդիայում այդ իրաւունքը ևս գոյութիւն ունի ձեռական կերպով, բայց օրէնքը բարբառում է. «Այն դէպքերում, երբ յատուկ, բացառիկ հանգամանքները պահանջում են, բարձրագոյն վարչական կառավարութիւնը կարող է ջնջել համայնքի դրած արգելքը»: Սյդպիսի «բացառիկ հանգամանքներ» վարչութիւնը գտաւ բոլոր քաղաքներում և շատ գիւղերում:

Ահա գլխաւոր պատճառը, թէ ինչու ոգելից ըմպելիքի գործածութիւնը այնքան քիչ նուազեց Շվեդիայում: Մեր կարծիքով, միայն արգելումը կարող է նշանաւոր քայլ անել դէպ առաջ, նօրվէզիական սխտեսի համեմատութեամբ:

Վերջերում միայն Թինլանդիան՝ առանց մենավաճառութեան՝ և միայն արգելիչ միջոցներ գործադրելով, շատ արագ ունեցաւ այն աջողութիւնը, որին հասել է Նօրվէզիան: Գլխաւորն այն է, որ չը պէտք է աչքից բաց թողնել այն նպատակակէտը, որին մենք ձգտում ենք.— այդ նպատակը այն չէ, որ մենավաճառեցնենք այս կամ այն խմիչքը, այլ այն, որ հետզհետէ ոչնչացնենք բոլոր ոգելից խմիչքները:

Գ) Խմելու սովորութիւնը, որ հետզհետէ աճում է ոգելից խմիչքների արտադրութեան մեծանալով և էժանանալով, քայքայում է ընտանեկան կեանքը:

Գ) Խմելու սովորութիւնը, որ հետզհետէ աճում է ոգելից խմիչքների արտադրութեան մեծանալով և էժանանալով, քայքայում է ընտանեկան կեանքը:

դ) Վերայիշեալ գործօնները շնորհիւ, չափաւորութեան հասկացողութիւնը լայնանում է գէօմէտրիական յարաբերութեամբ և օրինակ, մեզ մօտ, Շվէյցարիայում, այն մարդիկ, որոնք ամեն օր խմում են 2 լիտր զինի և իրանց երեխաներին էլ տալիս են կօնեակ՝ առողջութեան համար, կարծում են, թէ նրանք չափաւոր են իրանց և իրանց երեխաների վերաբերմամբ:

ե) մինչև անգամ ամենաթեթև հարբածութիւնը, զիցուք այնպիսին, որ անխուսափելի է սովորական օդային հիւրասիրութիւնների ժամանակ, յաճախ բաւական է լինում, որ զրդէ մարդին դէպի անխոհեմ գործողութիւններ, գլխաւորապէս՝ սեռական անզգոյշ յարաբերութիւններ, որոնք թունաւորում են նրա ամբողջ կեանքը և յաճախ կործանում են նրա բաղգաւորութիւնը վերական ակտերով:

Մի խօսքով, ոգելից խմիչքների չափաւոր գործածութիւնը, մտնելով ժողովրդի սովորութեան մէջ, մատեմատիկական ճշտութեամբ հասցնում է անչափաւորութեան և ապա դէպի աստիճանաբար թղչնաւորումն

և աննկատելի կերպով դէպի ժողովրդի ֆիզիքական ու բարոյական այլասեռումն:

Ալկօհօլականութեան դէմ կռուելու պատմութիւնը փաստերով ապացուցանում է, որ բոլոր ջանքերը, ուղղուած միայն չափազանցութեան դէմ, մնացին ապարդիւն, և որ, այդ պատճառով, առաջ եկաւ լիակատար ժուժկալութեան և արգելման շարժումներ, որոնք այն տեղերում, ուր նրանք ընդունուեցին թէ մասամբ և թէ ամբողջովին (Ֆինլանդիա, Նօրվեգիա, Միացեալ Նահանգներ) ունեցան զբաւական և արդիւնաւոր հետեանք:



III. Զրկում ե՞նք արդեօք հաճոյքից լիակատար ժուժկալութեան շնորհիւ:

Ճիշտ է, որ բոլորովին առողջ մարդիկ, ժուժկալութեամբ, զրկուած են համեղ զինիների և այլ խմիչքների հաճոյքից, բայց զբա փոխարէն նրանք այնքան մեծ օգուտ ունեն, որ այդ զրկանքը աւելի քան վարձաւորում է:

Նրանց կարիքը մէկով պակաս է, նրանք

անատեւում են փող, ֆիզիքական աշխատանքի ժամանակ նրանք չեն զգում հեղձուցիչ ծարաւ, նրանք չեն վախենում իրանց կեանքի վտանգումից:

Բայց որ աւելի կարեւորն է, դա այն է, որ նրանք անհամեմատ աւելի շատ արամազրւում են դէպի մաքուր հրճուանք, իրէպլ, սէր և այլ բարձր բարոյական ու էսթետիկական հաճոյքներ: Այո, պարոններ, նրանք դառնում են աւելի անկեղծ և զգայուն, և ես համարձակ պնդում եմ, որ այլապէս չի կարող լինել, եթէ մարդ իսպառ ազատուի ալիօսիլի ճանկերից:

Ես լաւ դիտեմ, որ ալիօսիլի ինչպէս չափաւոր, նոյնպէս անչափաւոր գործածողները կը ծիծաղեն մեզ վրա, երբ մենք այդպէս ենք խօսում: Դա առաջանում է նրանից որ իւրաքանչիւր մարդ՝ որը տարուել է գինիով և միշտ գտնուում է ալիօսիլի ազդեցութեան տակ, չունի լիակատար ինքնազիտակցութիւն:

IV. Որովհետեւ անալիզի անխափառ գործածութեան հետեւնիւնէր:

Հարկաւոր է արդեօք այդ էլ կրկնել նորից:

ա) Մարմնի օրգանական հիւստիւածների վերաստեղծումն, — նախ և առաջ սրտի, թոքերի, ստամոքսի, երիկամունքների և իբրև հեականք դրա՝ հիւժումն և վաղաժամ մահ սրտի ճարպակալումից (գերութիւնից), երիկամունքների և թոքերի ցերրօղից, ստամոքսի քրօնիկական կատարրից և այլն, թէև մահուան վկայագրերը, չը խօսելով արդէն մահացուցականների մասին, ի յարգանս մեռելալի և նրա ընտանիքի, համարեա միշտ լուրթեան և տալիս իսկական պատճառը: Մի ինչ որ տարօրինակ հակասութեամբ մեր դարը, որ ահագին քանակութեամբ ալիօսիլ է գործածում, ամօթ է համարում նրանից հիւանդանալը: Շատ յաճախ եմ ես լսել մեծաշուք ճառեր և դամբանականներ այն մարդկանց գերեզմանի վրա, որոնք սեռել են միմիայն ալիօսիլի անչափաւոր գործածութիւնից: Շատ քչերը միայն դիտէին

մահուան իսկական պատճառը: Բացի այդ, արհօհօլից թունաւորուելը թագցնելու սովորական պատճառը՝ կեանքի ապահովագրութիւնն է:

բ) Ողեղային վերաստեղծումն: Սա՛ արհօհօլը ի չարն գործ դնելու սովորութեան վատթարագոյն հետեանքն է: Ինչպէս հոգեկան հիւանդութիւնները բժիշկ, ես կարող եմ խօսել այդ մասին, ղեկավարուելով իմ անձնական դիտողութիւններով:

Դանդաղօրէն, աստիճանաբար, արբեցողը դառնում է մարդախորշ, աւելի զգայնասէր, յիմար. բարոյական զգայնութիւնը բխանում է, մեռնում է խիղճը. նա դառնում է խարդախ, նենգաւոր և բխամիտ: Արագ մեռնում է մարդու մէջ մարդը, մինչև որ վերջապէս որ և է ուժասպառիչ հիւանդութիւն (ստամոքսի կատարը, ոտքի պատահական կտարուածք, ծիւրումն) առաջ է բերում սասախկ տենդ:

Արբեցողութեան շարունակումը կրկնել է տալիս տենդը, ուղեղի քրօնիկական թունաւորումը սուր կերպարանք է ստանում, գառանցանքը դառնում է անընդհատ և հիւանդը ինքնասպան է յինում. կամ մեռնում

է գառանցանքի սաստկութեան մէջ, կամ թէ վերջապէս հետզհետէ դառնում է անբուժելի տկարամիտ և մեռնում է գժանոցում, եթէ միայն ժամանակին չը սթափուէ և չը դիմէ ժուժկալութեան, որը միայն դեռ կարող է փրկել նրան: Թէ որպիսի տառապանքներ է պատճառում նա մահուանից առաջ իր շրջապատողներին—կոպտութեամբ, ցինիկութեամբ, վատնողութեամբ, վեներական ախտերի վարակմամբ, դժբաղդ, հիւանդ զաւակների ծնմամբ, իր ընտանիքի յուսահատութեամբ և բարոյական քայքայմամբ,— այդ ամենը գիտեն նրանք, որոնց պատահել է տենել այդ թշուառութիւնը, այդ քայքայումը, այդ յուսահատութիւնը, որ դժուար է նկարագրել բաւական պարզ և վառ գոյներով:

Բայց և այն մարդիկ, որոնք մինչև վերջը չեն գնում, որոնց «հոգին գիտէ չափ» և որոնք՝ գինուն սովորած լինելով՝ դառնում են միայն չափաւոր կոպիտ, չափաւոր ցածհոգի, չափաւոր ծոյլ, չափաւոր խարդախ, որոնց չէ կարելի մինչև անգամ արբեցողների շարքը դասել,— և այդ մարդիկ՝ որոնցով յի են սիշտ գինետները ու պան-

դովները, կազմում են նոյնպէս մեր օրերի ժանտախտային գէշ պալարը:

գ) *Խարստերի ապակաւնորիւն* եւ *անուղղակի վնաս*: Պանդոկային կեանքը և զինուո գոլորշիները մշուշը խլում են մարդուն ընտանիքից և ձգում են նրան անառակութեան գիրկը: Նրա միտքն ու հոգին մուսլուում են. նա դառնում է մուլի, զգայնասէր և բթանում է: Այդ ժամանակ նա յաճախ վարակւում է վեներական ախտերով, որոնց միջոցով պատուաստում է թէ իրան և թէ իր երեխաներին՝ հիւանդութիւնների թոյն, որոնք վրէժ են լուծում ապագայ սերունդներից՝ հայրերի մեղքերի համար:

դ) *Սերնոյի ալլաւետումն*: Որ արբեցողների որդիքը ծնւում են նոյնպէս արբեցողական հակումով, որ նրանք յաճախ լինում են լուսնոտներ, բախիտիկ (ողնակոր), յիմարներ, համրուխուկեր, կարճահասակներ, ջղայիններ և այլն,—այդ արդէն վաղուց յայտնի է:

Այս տխուր փաստերը այնքան պարզ կերպով լուսաբանուած են այժմ շնորհիւ Փրանսիացի բժիշկների—Գրենէի, Գառնէի, Լէգրէնի և Լօրանի հետազօտութիւններէ, և

շնորհիւ Բերնի յայտնի բժիշկ պրօֆէսօր Դեմմէի բազմամեայ վիճակագրական աշխատութիւնների, որ և ես մի քանի խօսք պէտք է ասեմ թէկուզ միայն վերջիններիս մասին: Պրօֆէսօր Դեմմէն քննել է տասն ընտանիքի սերունդ, որոնց հայրերը, մասամբ էլ պապերը, եղել են արբեցողներ, և տասն ուրիշ ընտանիքի սերունդ, որոնց նախորդները, թէև բոլորովին ժուժկալ չէին, բայց սակայն համեմատաբար վարում էին զգաստ կեանք: Առաջին խումբը (արբեցողների սերունդը) բաղկացած էր 57 զաւակներից, որոնցից 12-ը մեռան ծնուելուց յետոյ՝ մարմնի թուլութիւնից, 31-ը տանջւում էին կամ ապուշութեամբ, կամ ջղաձգումներով և ընկնւորութեամբ, կամ խուլ-համրութեամբ կամ արբեցողական հակումով, ընկնւորութեան երեւոյթներով, կամ մարմնական հրէշաւորութեամբ, 5-ը թղուկներ էին և միայն 9-ը նօրմալ մարդիկ էին մտաւորապէս և ֆիզիքապէս: Վերջիններիցս միայն 7-ի հայրերը արբեցողներ էին, մայրերը և հայրական կողմի ազգականները զգաստ էին, մինչ մնացեալ որդիներից, որոնց

մայրերը կամ նախնիքը արբեցողներ էին, 2-ը մնացին նօրմալ:

Երկրորդ խումբն ունէր 61 զաւակ: Նրանցից 3-ը մեռան մարմնի թուլակազմութիւնից և 2-ը Gastroenteritis-ից (ստամոքազէ տապից) — անմիջապէս ծննդից յետոյ, 2-ը ապագայում տանջուով էին սքարախտից (хорей) և 2-ը ունէին մարմնական արատ: Ուրիշ 2-ը տկարամիտ էին, չը լինելով, սակայն, ապուշ 50 հոգին մեծացան նօրմալ կերպով:

Աւելացնենք և այն, որ արբեցողների 10 ընտանիք չունէին ժառանգական ախտեր և հիւանդութիւններ: Միայն նրանցից մէկն ունէր 2 ընկնաւոր և մի խելացնոր — երեքն էլ հօր կողմի ազգականներ, — իսկ միւս ընտանիքի հայրն ունէր մի խելագար եղբայր: Երրորդ ընտանիքի մայրը անձնասպան եղաւ հօր արբեցողութեան պատճառով:

V. Արհօհօղի արտադրութիւնը ծառայում է արդեօք իբր աղբիւր հարսութեան:

Արհօհօղի արտադրութիւն — դա մի անյատակ խորխորատ է, ուր թափուում են

մարդկային աշխատանքի սոսկալի քանակութիւն և երկրի արտադրութիւնները, որոնք սահմանուած են ոչ միայն անօգուտ լինել մարդկութեան, այլ և նրան վնաս պատճառել և դարձնել մուրացկան: Մի քանի հողատէրերի, գարեջուր պատրաստողների, գինեվաճառների և պանդոկապետների շահերը, վերջապէս տէրութեան (եթէ սա բըռնում է օդեգործարանատէրերի կողմը) շահերը, դրանք երեւակայական շահեր են, երեւութական հարստութիւն, որի թարս կողմն է — խեղճութիւն և ծանր վնաս ժողովրդին, նրա առողջութեան և սննդի, նրա անտեսական և բարոյական կեանքի վերաբերմամբ: Ճշմարիտ ասած, աւելի լաւ է վէճ հացի փոխարէն, քան թէ օղի:

Նոյն իսկ այն երկիրները շահերը, ինչպէս Ֆրանսիայի, որոնք գինի շատ են արտադրում, քան գործածում, ուրիշներից աւելի կանոնաւոր չեն:

Պարոններ, կանգնելով երես առ երես այսպիսի փաստերի դէմ, ամեն մի խոհուն մարդ պէտք է զարմանայ, թէ արհօհօղական ազէտի դէմ կուրը այդպէս զանդաղ է առաջ գնում:

Իս գլխաւորապէս առաջանում է նրանից, որ մարդիկ շատ գէպքերում նմանում են ոչխարի, որոնց Բարլէն գեղեցիկ կերպով պատկերացրել է, և որոնք բոլորն էլ ընկան ծովը, երբ Պօնուրզը այնտեղ հրբեց առաջընթաց ոչխարին *):

Տիրապետում է սովորութիւն—հպա-

*) Բունգէն գրում է. «Արբեցողութեան գըլխաւոր պատճառը—մարդկային ձիրքն է ընդօրինակելու: Առաջին բաժակ վարելուը մեզ այնքան քիչ է դուր գալիս, ինչպէս և առաջին սրգարը: Մարդիկ սկսում են խմել, որովհետև ուրիշները խմում են: Իսկ երբ մի անգամ սովորում են խմել, էլ այնուհետև, պարզ է, որ ոչ մի արգելաօրթ պատճառ չի գտնուի: Մարդիկ խմում են, երբ հանդիպում են իրար, խմում են, երբ բաժանում են իրարից. խմում են, երբ քաղցած են, որպէսզի բաղցը կտորեն. խմում են, երբ կուշտ են, որպէսզի ախորժակ գրգռեն. խմում են, երբ ցուրտ է, որպէսզի տաքանան. խմում են, երբ շոգ է, որպէսզի զովանան. խմում են, երբ բունը գալիս է, որպէսզի չը քնեն: Խմում են վշտից կամ ուրախութիւնից գրգռած. խմում են ծննդի և մկրտութեան ժամանակ. խմում են թաղման հանդէսի ժամանակ: Խմում են, խմում են... Ուրեմն ինչո՞ւ չը խմել, որպէսզի մտապուրի կարիքը ու չքաւորութիւնը... Բայց այս ամենի մէջ ամենաանխելք բանն այն է, որ կուտում են հետեանքի (աղքատութիւն) գէմ և սաստկացնում պատճառը (արբեցողութիւնը):

տակուել ազդեցութեան, անգլխաւցօրէն հաւատալ հեղինակաւորութեան: Անում են այն, ինչ որ ուրիշները, առանց իրանց հաշիւ տալու, թէ ինչո՞ւ: Յետոյ ինստիտաբար վնասում են պատճառներ, որոնցով լեելացի, լօգիկական, նպատակաւոր ձև տան իրանց անմիա վարքին, իսկ իրականապէս նրանք խմում են ուրիշներին նմանուելով և հետեւելով:

Այս գէպքում մեծ դեր է խաղում ծագրուելու երկիւղը, ինչպէս աշակերտները, որոնք վախենում են ուրիշներից տարբերան անել: Ինչքան մարդիկ են խոստովանել ինձ այդ բանը: Այդպէս է բոլոր արտասովոր մտքերի և գործողութիւնների ճակատագիրը: Մինչև անգամ բոլոր հանճարաւոր նորմուծութիւնները և գիւտերը հանդիպում են ծաղրի ու կատակների: Այս երևոյթը պէտք է ուրախացնէ մեզ:

Ուսանողական կեանքում արլօճօլի խաղացած դերը, ցաւօք սրտի, այս պատմութեան ամենատխուր գլուխներից մէկն է կազմում: Ես չեմ ճանաչում հիւսիսային երկիրների ուսանողներին, բայց կարող եմ ասել, որ Գերմանիայի, Շվեյցարիայի, Աւստ-

ըիայի, նոյն իսկ Ֆրանսիայի համալսարանական երիտասարդութիւնը իր հոգեկան ոյժերի մեծ մասը այրում է գարեջրի, գինու և արսէնաի մէջ:

Ծաղրածուական հարկադրումը և կապիկային սնափառութիւնը, որ մօղայի մէջ ձգեց գերմանացի ուսանողների հռչակաւոր «saufcomment-ը» *) (իր անունով միայն բաւական բնորոշ), անսպասան պատկանում են մեր դարի ամենազարշելի աւելորդաբանութիւններին: Սա հոգեկան ամենավառ մերկութիւնն է, ակնյայտի testimonium paupertatis **) — է, որից աւելի յիմար բան դժուար թէ գտնէր իր համար համալսարանական երիտասարդութիւնը — ժողովրդի հոգևոր յոյսը: Ուսանող պարոնները յաճախ ծիծաղում են կանանց պարիզային մօղաների վրա, — ես էլ երգուեալ թշնամի եմ այդ անձաշակ, տարէցտարի փոփոխւող, կապիկային հագուստների, որոնք, սակայն ալկօհօլ գործածողների հետ այն ընդհանուր կողմն ունեն, որ թէ առաջինները և թէ վերջինները գլխաւորա-

*) Ժողովարաններ՝ արբեցողութեան համար:
 **) Զբաւորութեան վկայական:

պէս ծառայում են շահախնդիրների գրպանները լցնելուն: Բայց սրբան աւելի յիմար է և հակաէսթէտիկական ուսանողների արբեցողութեան ձևը, մօղան: Եւ այս կոչւում է Fidelität *: Այն, հրաշալի Fidelität-է, լեզուի կակազումներով, կռիւներով, փոխումներով և գլխացաւերով: Fidelität, որի մէջ հանձարեղ են համարում ամենահսկայական բթամտութիւնը, հրճւում են ամենալիրը կոպտութիւններով և խոզավայել վարմունքներով: Դուք ինձ կը հակաճառէք, թէ կօրպօրացիայի կարգապահութիւնը արգելում է ծայրահեղութիւններ, — ես այդ չեմ բացասում, ուստի չեմ ուզում ոչինչ ասել մնացեալի՝ ուսանողական կօրպօրացիայի՝ մի քիչ միջնադարեան ուղղութեան դէմ: Զը լինէր այդ չարաբաղդ Trinkcomment-ը և մենամարտները, ես առաջինը պատրաստ եմ հրճուել և փառաբանել ուսանողական միութիւնները: Բայց մի՞թէ այդ միութիւնները չեն կարող առանց տաքացնող խմիչքների նոյն յաջողութեամբ առաջ տանել իրանց խնդիրները, արթնեցնել

*) Հաւատարմութիւն, առաւելապէս բաւկամներին արբեցողական խնձոյքների ժամանակ հաւատարիմ մնալու մտքով:

ձգտումներ դէպի գեղեցիկը և բարին, հոգալ մտաւոր և հոգեկան զարգացման մասին. մի՞թէ անդամների ժուժկալուժեան և զգաստութեան պայմանով չեն կարող գոյութիւն ունենալ մարմնամարդական, երաժշտական, երգեցիկ, դրամատիական, գիտական, գեղարուեստական, գրական, սօցիալական հարցեր մշակող, ժողովրդական լուսաւորութեան մասին մտածող և այլ ընկերութիւններ:

Ի՞նչ գործ ունի այստեղ, բոլոր այն այգիւ ձգտումների հետ միասին, որոնք բարձրացնում են համալսարանական երիտասարդութիւնը և նպաստում նրա զարգացման, ի՞նչ գործ ունի այստեղ այդ թշուառ, շատերի համար օրհասական ճահիճը, գինու, արբեցողութեան, բթացման ճահիճը, որ կործանում և ուժասպառ է անում ամեն մի կենդանութիւն, դարձնում է մարդկանց կոպիտ, լիբբ, բուժ, ոչնչացնում է բոլոր իդէալական ձգտումները: Ես կարծում եմ, պարոններ, որ միայն մի միջոց կայ ազատելու այս համալսարանական փչացնող ճահճից, — այդ միջոցն է՝ ուսանողական ժուժկալուժեան ընկերութիւնների կազմակերպութիւնը, որոնք իրանց կը նուիրէին վերոյիշեալ խնդիրներին

և արիաբար կռիւ կը մղէին անժուժկալների դէմ: Հարց չէ կարող լինել այն մասին, թէ ով կը յաղթէ: Բայց ամեն մի սկզբնաւորութիւն դժուար է: Դուք սկզբում կը հանդիպէք ծաղրի, անհաւատարմութեան, ատելութեան, կատակի, հարստահարութեան, յետոյ չարութեան, հայհոյանքի, ձեզ գուցէ և վիրաւորեն, ծեծեն. զարեջրատներում և գինեաներում տիրող բարբերի պատճառով մտաւոր կռուի այդ ձեւերը յաճախ գործադրում են և հէնց այնտեղ, որտեղ այդ թւում է, թէ բոլորովին անյարմար են, — համալսարանական երիտասարդութեան մէջ. մեծամասնութիւնը հարկաւոր չէ գտնում փոքրամասնութեան հետ նազ անել: Բայց յաղթութիւնը նրանը կը լինի, ով հոգեպէս ուժեղ է. նա կը լինի համոզմունքի, ճշմարտութեան, բարոյ և անկեղծութեան կողմը: Այնտեղ, որտեղ գիտութիւնը ընդհարում է նախապաշարման հետ, բարոյական ոգևորութիւնը՝ բարոյական անկման հետ, բարին և գեղեցիկը՝ չարի և տգեղութեան հետ, այդտեղ ոչնչանում են նախապաշարումները, անբարոյականութիւնը, չարը և տգիտութիւնը: Մեր գէնքը այնքան լաւ է, այնքան զօրեղ

է բարոյապէս և ֆիզիքապէս, որ ապագայում յաղթանակը մենք կը տանենք անպատճառ:

Բայց, պարոններ, չը մոռանաք, որ զէնքը նպատակ չէ: Ժուժկալութիւնը չը պէտք է կուռք դարձնել, որ նա բռնէ քէֆի տեղը և մենք արդէն նրանով հանգստանանք: Ժուժկալութիւնը միայն միջոց է ազատուելու մահացու ախտից և ուղղուելու դէպի բարձր նպատակներ: Այդ պատճառով ուսանողական ժուժկալութեան ընկերութիւնները պէտք է եռանդով աշխատեն հոգևոր կեանքի բոլոր շրջաններում, որպէսզի դէպի իրանց գրաւեն ոչ միայն մտածողները, այլև բոլոր՝ մտաւորապէս հասուն գործող ուսանողները: Մենք բոլորովին չենք ցանկանում լինել ճգնաւորներ, մռայլ դէմքով, այլ կենսուրախ, գործունեայ մարդիկ, որոնք կարողանում են օգտուել կեանքից և արիաբար կռուել ճշմարտութեան համար:

Մենք բոլորովին չենք ցանկանում խեղդել մարդկային բնական և լաւ կարիքները ու հաճոյքները. — մենք ցանկանում ենք միայն նրանց պահել մարդկութեան բարոյական զարգացման սահմաններում, և մարդկու-

թիւնը անպատճառ պէտք է յենուի լաւ առողջապահութեան վրա. ուղում ենք այդ հաճոյքները հպատակեցնել բարոյական և էսթետիկական այն նպատակներին, որոնք ուղղուած են մարդկային երջանկութեան պարզ գիտակցութեան:

Ես վերևում արդէն խօսեցի մարդկանց զօրեղ շարժիչի՝ սիրոյ մասին: Այժմ ձեր թոյլութեամբ եմ խնդրում կրկին մի քանի խօսք ասելու այդ մասին *):

Ստոր կենդանիներն ունեն միայն սեռական կարիք, բայց սէր չունեն: Աւելի բարձր կազմակերպութեան կենդանիները պաշտպանում են էգերին և ունեն դէպի

*) Պրօֆէսօր Ֆօրէլի օրիգինալ հայեացքները ուսանողների ամուրի կեանքի մասին և այսպէս կոչուած «Ֆիզիօլօգիական անհրաժեշտութեան» մասին գետեղուած են նրա ձառերի և դասախօսութիւնների հատուածներում, դօքտոր Կօրնիզի «Ողջախոնութեան առողջապահութիւն» գրքի մէջ (Թարգմ. դ-ր Լէնէնրէրգի. Օդէսսա. 1890 թ.): Իր դասախօսութիւնների մէջ պրօֆ. Ֆօրէլը յարձակվում է ուսանողական կեանքի ուրիշ կողմի վրա, ոչ պակաս սոսկալի, քան արբեցողութիւնը և մերկացնում է իր ամբողջութեամբ այն վայրենի նախապաշարումը, որին խմաստակները, թէ բժիշկներ և գլխաւորապէս ոչ — բժիշկներ անուանում են «ֆիզիօլօգիական անհրաժեշտութիւն»:

նրանց յարուսնս. մի քանիսնների մօտ տեսնում ենք մայրական սէր, միւսների մօտ — հայրական, որի մէջ է կայանում ընտանիքի սաղմը: Հասարակական կենդանիների մօտ — մրջիւնների, մեղուների, կապիկների մօտ մենք արդէն տեսնում ենք, որ անհասաները գոհում են իրանց կեանքը և կրքերը՝ ընդհանրութեան համար:

Մարդուս, որպէս բարձր էակի, հոգևոր էակի և հասարակական կեանքով ապրողի նախազոռած էր զարգացնել ընտանեկան կեանքը և բարձր սէրը, այսինքն փոխադարձ գոհեր մասնաւոր անձերի՝ նախ իր ընկերուհու, իր որդոց, իր ծնողների օգտին: Կենդանիների և մի քանի ստորին ցեղերի ընդհանուր գուգաւորութիւնից զարգացաւ և հետզհետէ զարգանում է միակնութիւնը, որ պէտք է հիմնուի ոչ թէ ստիպմունքի և արհեստական կարգադրութիւնների, այլ անկեղծ սիրոյ վրա: Ապագայ սօցիալական գիտութիւնների դժուար և վեհ խնդիրը կայանում է նրանում, որ ընտանեկան կեանքը համաձայնեցնեն բոլոր մարդկանց սօցիալական բարձր շահերի հետ: Դա անխուստփելի է մեր հասարակական ապագայ կազմակերպու-

թեան զարգացման ժամանակ: Բայց բարձր սէրը, որ ծառայում է իբր մարդկային ցեղի հիմք, ընտանիքը, երբէք և ոչ մի դէպքում, չը պէտք է գոհել այն հաճոյքին, որ պահանջում է ուրիշի կորուստը: Այդ կը լինէր մի քայլ յետ, վախճանի սկիզբը, վերագարձ դէպի ընդհանուր գուգաւորութիւնը, դէպի ստոր կենդանիների սեռական ինստիկուանսները, դէպի կոպիտ եսական զգայութիւնները: Այդ անդրադառնումը կը լինի ոչ միայն հրէշութիւն, այլ և ուղղակի անկարելիութիւն: Ուստի և այժմեան ձգտումն դէպի հասարակական բէֆօրմները կը լինի կամ բարոյական, այսինքն առողջարար, կամ թէ նա, — ինչպէս բոլոր հակաբնական վարժունքները, որ հնարել են թէօրէտիկները, ինչպէս ամեն մի ցինիկ անառակութիւն և եսական զգայութիւնների բոլոր չափազանցութիւնները — կը կորչի և կը փոխարինուի մի ուրիշ բանով:

Յիշեցնում եմ ձեզ յայտնի կեղծ — ազատամիտ մտածողների զգայական նւթական դպրոցի մասին, անբարոյական վերանորոգիչների և վիպասանների մասին, նոյնպէս և այն զիտակից և անգիտակից խաբեբանների մասին, որոնք ենթադրում են իրանց նը-

պատակին հասնել, զբզուելով ժողովրդին դէպի ասելութիւն, եսասիրութիւն, զգայնական հաճոյքներ, զարթեցնելով նրա մէջ ասելութիւն դէպի սիրոյ բարձր ձևերը:

Այդպիսի զգայնական դպրոցի ոչնչացման համար, որը ցինիկութեամբ յայտարարում է, թէ բոլոր իդէալական ձգտումները՝ ցնորք են, բաւական է բնական այն քայքայումը, որ կատարւում է ինքն իրան այդ դպրոցի մէջ: Որպէսզի այսօրուայ և վաղուայ համար բաւականութիւն գարթեցնէ, նա չէ մտածում յետագայ օրերի վշտի և աղէտի մասին: Բայց խաբուած սէրը, խաբուած յոյսերը, ալիօժօլականութիւնը և վեներական հիւանդութիւնները անընդհատ աշխատում են ապացուցանելու նրանց՝ իրանց անանկութիւնը: Նայեցէք այդ խեղկասակ ցինիկների վրա 20—30 տարի յետո, երբ նրանք բարոյապէս և ֆիզիքապէս աւերուած, ամեն սիրուց զրկուած, ֆիզիքապէս և բարոյապէս այլանդակ սերունդ առաջացրած, կտտաղի, բայց անգոր ցանկութիւններով, թողնում են աշխարհը, որի մէջ նրանք միայն դժբախտութիւն են պատճառել: Միթէ կարելի է լուրջ մտածել, որ ապագան նրանց

է պատկանում: «Բայց կան բացառութիւններ», կասէք դուք ինձ: «Լինում են այդ ժամանակ խորամանկ աղուէսներ, որոնք փրկում են իրանց և իրանց որդոց կաշին, և ի դէպս լցնում են իրանց զբպանները»: Կարող է լինել: Ձը կայ օրէքք առանց բացառութեան: Բայց եթէ մենք կարողանայինք հետեւել նրանց սերնդի պատմութեան, այն ժամանակ մենք դրականապէս էլը գտնէինք, որ նա—սերունդը—կամ բարձրացել է շնորհիւ աւելի մեծ բարոյականութեան, կամ լծէ՝ ծնողների հետքերով գնալով, վերջ է վերջոյ պէտք է կործանուի: Շարժման և էվօլյուցիայի ներկայ աշխարհում ոչինչ չէ մնում անշարժ:

Պարոններ, առաջ կար ցեղական արխատօկրատիա: Նիւթական զարգացման շնորհիւ, որին, ուզում եմ ասել, չարքաշ համբերութեամբ հասաւ մարդկութիւնը, արագ գիւտերի և արդիւնաբերական օգուտների շնորհիւ, հին արխատօկրատիան փոխուեց նորի—դրամի և մամոնայի արխատօկրատիայի:

Ձը նայելով նրա արտաքին փայլին և առերևութական ոյժին, նա ևս այժմ տառա-

պում է ներքին վարակիչ հիւանդութիւն-ներով,—թուլութեամբ, փափկութեամբ և այլասեռութեամբ, զգայնական հաճոյքների և անբարոյականութեան շնորհիւ:

Ապագայ արխատօկրատիան հոգու արես-գօկրատիա է և դուք, պարոն ուսանողներ, դուք կազմում էք մարդկային այն նիւթը, այն տարրը, որից նա պէտք է բղխէ և կը բղխէ, որովհետեւ չէ կարելի թոյլ տալ, որ զրամի արխատօկրատիան փոխարինուէ բթամ-տութեան և կոպտութեան յոռեկրատիայով (կակօկրատիայով): Բայց նկատեցէք հետե-ւալը,—արհեստականապէս չէ կարելի հոգին բաժանել—մտքի, սրտի, կամքի և խղճի: Ապագան պատկանում է միայն մեր ուղե-ղային գործունէութեան ներդաշնակ զար-գացման: Յուսալ—հիմներու ապագայ հասա-րակականութիւնը «գուտ ինտելլեկտի» վրա, մտքի մտածուած եաստերութեամբ—շատ տարօրինակ է: Դա սահմանափակ մատե-րիալիստների ցնորական գառանցանքներն են, որոնք հոգեբանութիւնից ոչինչ չեն հաս-կանում: Առանց բարոյական գաղափարների և կարիքների, առանց խղճի, սրտի անկեղծ սիրոյ, առանց անձնագոհութեան ընդունա-

կութեան, առանց կարողանալու հպատա-կեցնել մեր ստոր բնական կարիքները բարձր հոգևոր ձգտումներին, որոնք միայն կապա-հովեն մեր և մեր որդոց առողջ զարգացու-մը,—առանց այս բոլորի ոչ մի սօցիալական բէֆօրմ անկարելի է, ոչ մի երջանկութիւն հնարաւոր չէ:

Իբր եզրափակումն հարկաւոր է ինձ ցոյց տալ այս սօցիալական-բարոյախօսական ակնարկներէրա կապը ալիօժօլի հարցի հետ:

Ալիօժօլը, որ վայրկենաբար բարձրաց-նում է հոգեկան գործունէութիւնը, որպէս-զի յետոյ նրան ոչնչացնէ, որ աստիճանա-բար և աննկատելի կերպով բթացնում է մեր բարոյական բարձր զգացմունքները, մտքերը և կամքը, թունաւորելով մեր ուղեղը, որ զարձնում է մեզ աւելի կատաղի զազաններ և աւելի կոպիտ, քան թէ ենք, որը, բացի այդ, ոչնչացնում է մեր ապագայ սերունդը դեռ իր սողմի մէջ և հաշմանդամ զարձ-նում նրան, ալիօժօլը—ամենատիւերիւմ թրշ-նամին է մարդկային ցեղի ապագային: Մենք պարտաւոր ենք մեր բոլոր ոյժերով և մի-ջոցներով ձգտել ոչնչացնելու, արմատահան անելու նրան և չը պէտք է հանգստանանք,

սինչև որ կը յաջողուի մեզ վերջնականապէս
և վճռականապէս նրան ուղարկել քիմիական
գործարանը, որտեղ մօրֆիի, օպիումի, կօ-
կաինի և հաշիշի հետ միասին կը դասուի
բոլոր միւս թոյների շարքը:

Ալիօհօլը, ոսկէ հորթի երկրպագու-
թեան հետ միասին, XIX-րդ դարի հրէշն է:
Տայ Աստուած, որ XX-րդ դարը ոչնչացնէ
թէ մէկը և թէ միւսը:

Այն ժամանակ միայն մեր մարդկու-
թիւնը նոր, աւելի երջանիկ ապագայի ընդ-
առաջ կերթայ:

Այդ բանի համար հարկաւոր է զարգա-
ցած մտքերի, համալսարանական երիտա-
սարդութեան օգնութիւնը, մեր մշտական
alma-mater-ի աջակցութիւնը, որ ներկայաց-
նում է ապագայի հոգևոր դրամապոլիսը:

Մեզ հետ եղէք, պարոնայք, մի գնացէք
մեզ հակառակ:

Ինչո՞ւ ես, նորերս ճանապարհորդելով
Նօրվէզիայում, ուրախանում էի, նայելով
ուրախ, լուրջ, մաքուր գիւղական ժողովրդի
վրա, որի նման ես դեռ երբէք չէի պատա-
հել, որ ուրախ, առանց անվայելչութիւննե-
րի, պարում է և երգում տօներին, փոխա-

նակ կոպիտ ու արբած մարդկանցով փողոց-
ները լցնելու և անցւորներին վախեցնելու,
ինչպէս, զժբաղդաբար լինում է մեզ մօտ:
Ինչո՞ւ, ընդհակառակն, ես այստեղ, մեծ քա-
ղաքներում, գտնում եմ նոյն արբեցողու-
թիւնը, ինչպէս և մեզ մօտ: Մի՞թէ կրթուած,
բարոյապէս մտածող և զգացող մարդկանց
պարտքը չէ մեզ հետ համահաւասար կրու-
ուել: Մի՞թէ մենք պէտք է թոյլ տանք, որ
հասարակ ժողովուրդը ամաչեցնէ մեզ, ժուժ-
կալութեան մէջ մեզ կարապետելով:

Ես վերջացնում եմ այս զրոյցս անհրա-
ժեշտ հրաւերով, աղերսալի խնդրով բոլոր
կրթուած մարդոց և կանանց, առաւելապէս
գիտութեան միջնորդներին, և նախ և առաջ,
բժիշկներին.— մտածեցէք, և ամենից առաջ,
ուսումնասիրեցէք զիտակցօրէն, լըջօրէն,
ժուժկալութեան հարցերը, փոխանակ, առանց
ապացոյցների՝ մեզ խելագար ֆանատիկոս-
ներ անուանելու: Գոնէ, փորձեցէք փորձա-
ռական համեմատական ուսումնասիրութեան
ձևերից մէկը.— փորձեցէք գոնէ ինքներդ մի
առ ժամանակ թողնել մինչև անգամ ոգելից
խւիչքների չափաւոր գործածութիւնը: Այս-

պիտի կարևոր հասարակական հարցն արժէ այդքան փոքր աշխատանք *):

*) Յիւրիխում կազմակերպուեց ալիօճօլի գործածութեան դէմ կռուող միջնադպային ընկերութիւն, որի կանոններն են.—

§ 1. Ընկերութիւնը կուում է ալիօճօլի գործածութեան դէմ, նայելով նրա վրա միայն առողջապահական և ժողովրդական—տնտեսական տեսակէտներից, այսինքն—մի չարիքի, որ մինչև վերջին աստիճան փաստում է ներկայ և յետագայ սերունդներին, հոգեկան, նիւթական և մարմնական կողմից:

§ 2. Ընկերութիւնը նպատակ ունի քարոզելու իր իրէաները էժանագին ամսագիրների, լրագիրների, գրքոյկների և դասախօսութիւնների միջոցով:

§ 3. Ընկերութեան անգամ կարող են լինել երկսեռի անձինք, առանց քաղաքական կուսակցութեան և դաւանանքի խտրութեան:

§ 4. Ընկերութեան անդամները բոլորովին ժուժկալ պէտք է լինեն բոլոր արբեցնող խմիչքների վերաբերմամբ:

Բացառութիւն կազմում է ալիօճօլի գործածութիւնը միայն այն ժամանակ, երբ բժշկի վկայականով կամ ծիսակատարութեան պատճառով պէտք է գործածել խմիչք, կամ երբ կեանքին վտանգ է սպառնում:

§. Ընկերութեան անդամ գրուելիս ամեն մէկը ազնիւ խօսք պիտի տայ, որ ժուժկալութիւնը խախտելու միջոցին կը հաղորդէ ընկերութեան ներկայացուցիչներին և կը վերագարձնէ անդամակցական տոմսակը:

Ծանօթ. Ալիօճօլի դէմ կռուելու ընկերութիւններ կան և մեր մէջ—Թավրէզ, Թիֆլիս: Պէտք է աշխատել տարածել այդ ընկերութիւնների թիւը:

Հ. Ա.



Բ.

Յիւրիխի շփեյցարական
 ժողովարական ընկերու-
 րեան կողմը:

Վերջին տարիներս հասարա-
 կական կարծիքի դատաստանին
 երթարկուեց այն հարցը, թէ
 արդեօք լուրջ փոսանգ չէ սպառ-
 նում մեր այդքան սաստիկ կիրքը
 դէպի ոգելից խսիչքները:

Այս հարցը քննելու ժամանակ
 ոչ ոք չէ վիճում, որ ոգելից խմիչքների չա-
 փազանց գործածութիւնը փաստակար է:

Գիտութիւնը աալիս է պարզ և անհեր-
 քելի ապացոյցներ, թէ ալիօսօլի յաճախակի
 և առատ գործածութիւնը առաջ է բերում
 փաստակար երևոյթներ մարդու օրգանիզմի

մէջ: Նա ապացուցանում է, որ ալիօսօլի
 ներգործութիւնը համանման է թոյնի (մկըն-
 դեղի) ներգործութեան, և ալիօսօլը համա-
 րում է պատճառ այնքան յաճախ հանդիպող
 նիհարութեան, հիւանդութիւնների և նոյն
 իսկ մահուան: Ապացուցուած է նոյնպէս,
 որ ալիօսօլը ներգործում է թմրեցուցիչ
 կերպով, նման էֆիրի, էլօրօֆօրմի և մօր-
 ֆիլի, և առաջացնում է մտաւոր գործու-
 նէութեան աւել կամ պակաս թուլութիւն:

Հասարակական գիտակցութեան մէջ
 կամաց-կամաց պարզում է և այն կապը,
 որ կայ այդ թոյների գործածութեան և հա-
 սարակական կեանքի երևոյթների մէջ:

Թշուառութիւնն ու աղքատութիւնը ե-
 րևան են գալիս իբր անսխիջական հետևանք-
 ներ արբեցողութեան, — նրանց երևումը բա-
 ցատրուում է ալիօսօլի փաստակար ներգոր-
 ծութեամբ, որ թուլացնում է մարդու դա-
 տողութեան ընդունակութիւնը, քայքայում
 է նրա ներքին գործարանները և պատճա-
 ուում է նրան հիւանդութիւններ ու տան-
 ջանք:

Բայց և այնպէս, մինչև այժմ այդ պարզ
 և ակնյայտնի նկատումները չեն կարողանում

խախտել հակումն՝ դէպի ակօհօլի չափաւոր գործածութիւնը և հաւատը՝ նրա անվնասակարութեան մասին:

Կասկած չը կայ, որ ոգելից խմբիչքների չափաւոր գործածութիւնը այն աղէտալի հետևանքերը չէ ունենում, ինչպէս չափազանց գործածութիւնը, և ամենօրեայ փորձը կարծես թէ ցոյց է տալիս, որ ակօհօլի գործածութիւնը արգելք չէ հանդիսանում մարդուս հոգեկան և ֆիզիքական բարձր ոյժերի երևան գալուն: Սակայն, մենք մի՞թէ չենք տեսնում կարճատեմներ, կոյրեր, խուլեր, լուսնոտներ, որոնք հասնում են մարդկային հոգու արտայայտութեան ամենաբարձր աստիճաններին, չը նայելով իրանց ֆիզիքական պակասութիւններին: Կոյր Միլտօնը և ուժասպառ Հէյնէն մեծ բանաստեղծներ էին. բայց մի՞թէ մենք այդ պատճառով պակաս պիտի ցուենք նրանց բնական պակասութիւնների համար: Չը պէտք է կարծել, թէ ակօհօլը չէ վնասում, երբ ուժեղ օրգանիզմը կարողանում է նրան տանել: Եւ եթէ իւրաքանչիւր առանձին անհատի կեանքի մէջ երևան կը գայ մի գործօն, որ կը կաշկանդէ առողջ օրգանիզմը և կը սպանէ

թոյլ օրգանիզմը, այն ժամանակ գործունէութիւնները այն դուժարը, որին ընդունակ է այդ ազգը, մի՞թէ վնաս չի կրի:

Պէտք է լսենք արդեօք մարդկութեան այն բարեկամներին, որոնք գանգատոււմ են, թէ բոլոր իրանց ջանքերը, փրկելու թոյլերին և մոլորուածներին՝ մնում են անհետևանք, այն կըքի ոյժի պատճառով, որ կազմում է մեր հասարակական ժողովների ամրացնող շաղախը: Չը պէտք է նայենք առաջ, այն վտանգի վրա, որ սպառնում է մարդկութեան ապագայ սերնդին, եթէ ճիշտ է այն հայեացքը թէ արբեցողը աւանդում է գանազան հիւանդութիւնների հակեղ ջղային սիստեմ ոչ միայն իր օրգոց, այլ և իր յետագայ սերնդին:

Պէտք է դէն ձգել այն առարկութիւնը, թէ մեր նախորդները անձնատուր էին լինում արբեցողութեան, բայց մնում էին բուրովին առողջ: «Եթէ ապացուցած է, որ ակօհօլի շարունակաբար գործածութիւնը կարող է ազգը կործանել, հապա ինչպէս են պահում իրանց գոյութիւնը մինչև այսօր արբեցողների սերունդները»:

Բայց բանը նրանումն է, որ այդ ճիշտ

չէ: ժողովրդի ահագին խմբեր մնում էին ամենևին չը վարակուած արբեցողութեամբ: Նրանց սովորական խմիչքը մաքուր ջուրն էր, բացառութիւն էր լինում միայն մեծահանգէս օրերին: Եւ նշանաւոր ու հարուստ ցեղերի սերունդները կը կորչէին արբեցողութիւնից, եթէ նրանք ժամանակ առ ժամանակ չը վերանորոգուէին, խառնուելով առողջ և հասարակ ժողովրդի հետ:

Միայն մեր ժամանակում գինեգործութեան տեխնիկան այնպիսի մեծ ծաւալ ընդունեց, երկրագործութեան արդիւնքները այնքան ահագին քանակութեամբ գործ են դրուում սպիրտ պատրաստելու համար, կործանիչ կրքին բաւականութիւն տալու ձրգտումն այնպէս սաստիկ և արագ է տարածւում, որ շուտով նրան կուլ կը գնան ժողովրդի բոլոր ոյժերը: Ներկայ ժամանակում այդ հարցը հասել է այն կէտին, որ խօսքը այլ ևս ոչ թէ հասարակութեան մի խաւի մասին է, այլ ամբողջ մարդկութեան:

Թողնենք մի առ ժամանակ մտայլ նախազգացումները այն հետեւանքների, որ կարող է արտադրել թոյնի շարունակաբար ներմուծումը մեր սերնդների շրային սիս-

տեմի մէջ և նայենք ալիօճօլի վրա՝ նրա կողմնակիցների հետ միասին, ինչպէս մի միջոցի, որ օգնում է մարդուն մոռանալ իր վիշտը, իր հոգսերը: Բայց միթէ մոռացումը Դանայի կորստաբեր սլարգը չէ: Միթէ այս մոռացումը չէ կայանում նրանում, որ մեր թուլացած բանականութիւնը դադարում է սեննել վտանգը, որով շրջապատուել է կեանքի ծովում լողացող մեր նաւակը: Միթէ այդ մոռացումը մտածելու ընդունակութեան բթացումն է, — բթացումն, որ ստիպում է մեր ժողովրդին բաւականանալ կոպիտ, անառողջ կերակրով: անյարմար բնակարանով, պանդոկի կեղտոտ սենեակով (որտեղ մի բաժակ դարեջուր խմելիս ասում են զանազան անվայել սրախօտութիւններ—թուլացած մտքի դժուծ արդիւնքներ), և այդ այն ժամանակ, երբ ժողովրդական կեանքի անտեսական պայմանները լաւացել են: Միթէ այդ ամենօրեայ նարկօզը (թմրեցուցիչ դեղը), որին անձնատուր է լինում մարդ, հէնց որ ազատուում է աշխատանքից, չէ դարձնում նրան անտարբեր դէպի բացակայութիւնը իր կեանքի մէջ գեղեցկութեան և բանաստեղծութեան, այդ միակ դրդիչ հզօրագարկերի

դէպի բարձրագոյն, գեղեցկագոյն կեանքը:

Իհարկէ, կան անձինք, որոնք կը համաձայնեն աւելի շուտ մեռնել, քան զրկել իրանց մոռացութեան-թմրութեան մասնուէլու հնարաւորութիւնից: Բայց մենք դիմում ենք ողջամիտ մարդկանց փոքրամասնութեան, յուսալով, որ նրանք կը մտածեն ապագայ սերնդի առողջութեան և ոյժի մասին: Այս մարդկանց դատողութեան ենք յանձնում հետևեալը:

Ձեր առաջ կանգնած է ապագայ, որից ինչպէս դուք գիտէք, մեծամեծ պահանջներ են անում, և որից սպասում են աւելի մեծ ընդունակութիւն, մեծ մտաւոր ոյժեր և մեծ ընդունակութիւն՝ մարդկանց խելացի կերպով դատարարակելու: Եւ անա ապագայի այդ մարդոց, այդ երիտասարդութեան, դուք տալիս էք միջոց (որ նա կարող է գործադրել ամեն ժամանակ) նրա համար, որ նա ծածկէ աչքերը իրականութիւնից, չը հոգայ այն հետևանքների մասին, որոնք սպասում են գոյութեան կռուի մէջ յաղթւողներին, նոյն իսկ մոռանալ այդ կռուի անհրաժեշտութիւնը: Ահա այդ միջոցը դուք գովում

և փառաբանում էք,—դուք, որոնց շրթունքների վրա այդ գովասանքը կրկնակի գին է ստանում, ինչպէս փորձուած մարդոց գովասանք: Դուք մատնացոյց էք լինում պօէզիայի և աւանդութեան վրա: Կամ թէ դուք հաւատում էք, որ պատանեկութիւնն այդտեղ յաղթող կը հանդիսանայ: Իսկ եթէ— ո՛չ, այն ժամանակ ի՞նչ կասէք:

Հեշտ չէ արմատախիլ անել այդ հմայիչ թոյնի գործածութիւնը մարդկութեան միջից, թոյնի, որ երկար ժամանակ նա խմել է. հարկաւոր է, որ սպառնացող վտանգի գիտակցութիւնը մեր մէջ ամրացնէ մեր դրական վճիռը: Մարդկային գիտակցութիւնը անպայման պէտք է վարժուի այն մըտքին, թէ նոյն իսկ ամենաչափաւոր մարդը՝ որ երբէք չէ արբում, որ միայն ճաշի ժամանակ է գործածում սովորաբար մի բաժակ զինի իր առողջութիւնը պահպանելու կամ թէ ամրապնդուելու համար, նա էլ է մոլորւում, որովհետև այն նիւթը որ թունաւորող ներգործութիւն է անում նրա վրա, ով երբէք չէ գործածել, չի կարող համարուել աննդարար:

Մինչև անգամ, եթէ ենթադրենք, թէ ալիօճօլի չափաւոր գործածութիւնը մարմնապէս և հոգեպէս առողջներին չէ վնասում, դա չէ նշանակում, որ պէտք է թուլակազմին էլ գայթակղութեան առիթ տալ: Այն ընկերական կեղծ դիմակը, որով ալիօճօլը մուտք է գործում մեր կեանքի շրջանի մէջ, պէտք է պատառուի, ոչնչացնուի:

Ներկայումս այն մարդիկ, որոնց առաւել մօտ է այս հարցի վճիռը՝ մարդկային կեանքի օրէնքների ուսումնասիրութեան մասին իրանց գրած աշխատութիւնների պատճառով և որոնք խոստովանում են այս հարցի մեծ կարևորութիւնը, վճռել են միանալ, որպէս զի իրանց համոզմունքով և օրինակով ազդեն հասարակութեան վրա այդ ուղղութեամբ:

Նրանք ուզում են ապացուցանել այն կարծիքի սնանկութիւնը, որով ոգելից խսիչքները համարւում են անհրաժեշտ, իբրև ամեն մի ժողովի շողկապիչ կապ. նրանք կամենում են հերքել այն նախապաշարումը, որ տեսնում է ալիօճօլի գործածութեան մէջ ապացոյց արիութեան, աղբիւր ուրախու-

թեան և բանաստեղծների ու հռետորների ոգևորութեան:

Նրանք ուզում են ցոյց տալ, թէ հոգուայն ուրախ տրամադրութիւնը, որ առաջանում է առողջ, զինու գոլորշիներից չը պղտորուած ուղեղի մէջ, անհամեմատ բարձր է նրանից, քան որ առաջանում է արբեցողութիւնից. թէ այն ընկերութիւնը, որ հիմնած է մտքերի փոխադարձ փոխանակութեան վրա, հաճելի լինելու համար կարիք չունի զինու կամ գարեջրի: Նրանք ուզում են ապացուցանել, որ հասարակութեան մէջ վայելուչ աշխուժութիւնը կարող է առաջ դալ առանց ալիօճօլի արբեցողութեան: Նրանք չեն սահմանափակւում չափաւորութեամբ, այլ հասնում են կատարեալ ժուժկալութեան և իրանց ծախսից ոչնչացնում են ալիօճօլի գործածութիւնը, ի նկատի ունենալով ինչպէս իրանց, նոյնպէս և շրջապատողների օգուտը:

Որպէս զի այդ օրինակը հետևողներ ունենայ, հարկաւոր է, որ այդ մասին գիտեսան շատ մարդիկ: Մենք խնդրում ենք բոլորին, որոնք իրանց սրտին մօտ են ըն-

դունում ապագայ մարդկութիւնը, ով ուշի-
ուշով հետևում է մարդկային կուռին խե-
լացի կերպով ապրելու համար, միանալ մեզ
հետ, որովհետև միայն այն ժամանակ մարդ-
կային հանձարը կը յաղթանակէ, երբ նրա
նշանաբանը կը լինի—«չը քնեցնեղ ակնը
այլ կոտեղ»:



Գ.

Փառնակ է սրափուտի:

Գինին կործանում է մարդկանց մարմ-
նական առողջութիւնը, կործանում է մտա-
ւոր ընդունակութիւնները, կործանում է
ընտանիքների բարեկեցութիւնը, և որ ամե-
նից սոսկալին է, կործանում է մարդկանց
հոգին և նրանց սերունդը և, չը նայելով
դրան, տարէցտարի աւելի ու աւելի է տա-
րածւում ոգելից խախտների դործածութիւնը
և նրանից առաջացած արբեցողութիւնը:
Վարակիչ հիւանդութիւնը հեռզհեռէ ճարա-
կում է շատ մարդկանց,—խմում են արդէն
կանայք, աղջիկներ և երեխաներ: Եւ հասա-
կաւորները ոչ միայն չեն արգելում այդ,
այլ իրանք էլ, արբեցողներ, խրախուսում
են նրանց: Թէ հարուստ, թէ աղքատ կար-
ծում են, որ չէ կարելի ուրախ լինել առանց
հարբելու կամ կիսահարբելու, կարծում են,

որ կեանքի մէջ բոլոր նշանաւոր գէպքերի ժամանակ,— թաղման, հարսանիքի, մկրտութեան, հրաժեշտի, տեսակցութեան ժամանակ— իրանց ուրախութիւնը կամ վիշտը ցոյց տալու ամենալաւ միջոցը կայանում է նրանում, որ քէֆովանան, և զրկուելով մարդկային կերպարանքից, նմանուեն անասունի:

Եւ որ ամենից զարմանալին է, այդ այն է, որ մարդիկ արբեցողութեամբ կորչում են իրանք և կորցնում ուրիշներին, իրանք էլ չը գիտենալով, թէ ինչո՞ւ համար են անում այդ: Իսկապէս, եթէ իւրաքանչիւր ոք ինքն իրան հարցնէ, թէ ինչո՞ւ են մարդիկ արբում, ոչ մի կերպ չէ կարող պատասխանը գտնել: Ասել, թէ գինին համեղ է, չէ կարելի, որովհետեւ ամեն մարդ գիտէ, որ գինին և գարեջուրը, եթէ չեն քաղցրացրած, անախորժ են թւում առաջին անգամ խմողներին: Գինուն սովորում են աստիճանաբար, ինչպէս միւս թոյնին— ծխախոտին, և գինին դուր է գալիս այն ժամանակ, երբ մարդ սովորում է գինու առաջացրած արբեցողութեան: Ասել, որ գինին առողջութեան հա-

մար լաւ է, նոյնպէս չէ կարելի այժմ, քանի որ շատ բժիշկներ, այդ բանով զբաղուելով, ապացուցին, որ ոչ օղին, ոչ գինին, ոչ էլ գարեջուրը չեն կարող առողջարար լինել, որովհետեւ նրանք մննդարար չեն և միմիայն պարունակում են ֆլասակար թոյն:— Ասել, որ գինին աւելացնում է ոյժերը, նոյնպէս չէ կարելի, որովհետեւ նկատուած է ոչ թէ մէկ, այլ հարիւրաւոր անգամ, որ արբեցող մարդկանց մի խումբ աւելի քիչ գործ է կատարում, քան ոչ արբեցող մարդկանց մի նոյնպիսի խումբ: Հարիւրաւոր և հազարաւոր մարդկանց վրա կարելի է նկատել, որ միմիայն ջուր խմող մարդիկ աւելի ուժեղ են և առողջ, քան գինի խմողները: Ասում են նոյնպէս, որ գինին տաքացնում է, բայց այս էլ ճիշտ չէ, և ամեն ոք գիտէ, որ խմած մարդը տաքանում է շատ քիչ ժամանակով, և աւելի շուտ է մրսում, քան չը խմողը:— Ասել, թէ թաղման, մկրտութեան, հարսանիքի, տեսակցութեան, հրաժեշտի, առտուրի, ծախսի ժամանակ խմելով մարդ կարող է լաւ մտածել անելիքը, նոյնպէս չէ կարելի, որովհետեւ այսպիսի գէպքերում

հարկաւոր է ոչ թէ գինուց թմբել, այլ մտածել գործի մասին թարմ ուղեղով: Հարկաւոր է լուրջ լինել և ոչ թէ արբած:—Չէ կարելի և այն ասել, թէ սովորած մարդը երբ թողնէ գինին, կը վնասուի, որովհետև մենք ամեն օր տեսնում ենք, թէ ինչպէս արբեցող մարդիկ բանտն են ընկնում և այնտեղ առանց գինու ապրելով, առողջանում են:—Չէ կարելի ասել և այն, որ գինուց առաջանում է մեծ ուրախութիւն: Ճիշտ է, որ գինուց մարդիկ կարճ ժամանակով կարծես տաքանում են և ուրախ տրամադրւում, բայց այդ երկար չէ տևում: Եւ ինչպէս մարդ գինուց տաքանում է ու յետոյ անելի սառչում, այնպէս նա ուրախանում է գինու ազդեցութեան տակ և ապա դառնում անելի մեղամաղձ: Հարկաւոր է միայն մտնել պանդոկ ու նստել, դիտել կռիւը, աղմուկը, արտասուքը, որպէսզի համոզուէ մարդ, որ գինին չէ ուրախացնում: Չէ կարելի ասել նաև, թէ արբեցողութիւնը վնաս չէ տալիս: Նրա պատճառած վնասը թէ մարմնին և թէ հոգուն, ամենքը գիտեն:

Եւ ի՞նչ: Գինին և անհամ է և անանըն-

դարար. նա չէ կազդուրում, չէ տաքացնում, չէ օգնում գործելու մէջ, վնաս է հոգուն և մարմնին,—բայց և այնպէս որքան մարդիկ խմում են և ինչքան առաջ ենք գնում, այնքան անելի են խմում: Ինչո՞ւ են խմում և փչացնում թէ իրանց և թէ ուրիշ մարդկանց:


«Բոլորը խմում են և հիւրասիրում, չէ կարելի, որ ես էլ չը խմեմ և չը հիւրասիրեմ», պատասխանում են շատերը, և նրանք, ապրելով արբեցողներին մէջ, կարծում են, թէ շուրջը բոլորն էլ խմում են և հիւրասիրում իրար: Բայց չէ՞ որ դա ճիշտ չէ: Եթէ մարդ գող է, այն ժամանակ նա կընկերանայ գողերի հետ, և այնպէս կը թուի նրան, թէ բոլորն էլ գողեր են: Նոյնը և արբեցողութեան ժամանակ: Ամենքը չեն խմում և հիւրասիրում: Եթէ ամենքը խմէին, այն ժամանակ մարդկանց կեանքը երկար չէր լինի, բոլորն էլ կը մեռնէին. բայց մինչ այդ աստիճան չի թոյլ տայ Աստուած,—միշտ և այժմ էլ կան միլիոնաւոր չը խմող մարդիկ, որոնք հասկանում են խմելու և չը խմելու լուրջ տարբերութիւնը: Եթէ խմող մարդիկ

գինեվաճառների հետ ձեռքի տուած աշխատում են ամբողջ աշխարհին խմացնել, գոնէ ժամանակ է, որ խելացի մարդիկ հասկանան, որ իրանք էլ պէտք է ձեռք ձեռքի տուած կռուեն չարիքի դէմ, որպէսզի նրանց և նրանց որդիներին էլ խմել չը սովորեցնեն մոլորուած մարդիկ:

Ժամանակ է սրափռուելու:

Վ Ե Ր Զ





« Ազգային գրադարան



NL0279133

2567

